ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ-416-Ա
քաղ. Երևան

«ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2/5808-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվակա-նի ապրիլի 17-ի N ՖԲ/ԱՆՄ-4/2559-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 15-ի N ՎՄ/3-4/ 5433-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 14-ի N 01/1670-14 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության կողմից ուղարկված՝ «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի (217 տեղ, 32,800 կգ ընդհանուր քաշով, 6000 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Շիրակի» Տ/Մ) ներմուծումը:

2. «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժո-ղով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Շիրակի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ